ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. սեպտեմբերի 11-ից 15-ը Ավստրիայի քաղաք Վիեննա գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անդրանիկ Հակոբյան – ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության տրանսֆերային գնագոյացման և հարկային համաձայնագրերի կիրառման բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Վիեննա, 2023թ. սեպտեմբերի 11-ից 15-ը:

3. Հրավիրող կողմը.

Վիեննայի միացյալ ինստիտուտ (ՎՄԻ, JVI)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակից երկրների կողմից գործնական քննարկում՝ հարկային համակարգի առանձնահատկությունների, ինչպես նաև ՏՀԶԿ նախաձեռնությունների, մասնավորապես BEPS 1-ին Գործողության («Թվային տնտեսության մարտահրավերներ») և 15-րդ Գործողության («Բազմակողմ կոնվենցիա») վերաբերյալ:

5. Քննարկված թեմաները.

- Տրանսֆերային գնագոյացում,
- ՏՀԶԿ BEPS 1-ին Գործողություն («Թվային տնտեսության մարտահրավերներ»),
- ՏՀԶԿ BEPS 15-րդ Գործողության («Բազմակողմ կոնվենցիա»),
- Տնտեսական անհավասարություն,
- Անօրինական ֆինանսական հոսքեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քննարկվում էին վերոնշյալ թեմաները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում քննարկվել է հետագայում նմանատիպ գործնական հանդիպումների անցկացման նպատակահարմարությունը և մասնակից երկրներին առաջարկվել է նշել թեմաներ՝ ապագայում նման գործնական քննարկումներ անցկացնելու նպատակով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է նման գործնական հանդիպումներ կազմակերպել հաճախակի և համապատասխան թեմաների վերաբերյալ առաջարկները նշել անցկացված հանդիպման վերաբերյալ հարցման մեջ: Գործնական թեմատիկ քննարկումները նպատակ ունեն ապահովելու ավելի արդյունավետ կերպով երկրների միջև փորձի փոխանակումը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

18/09/2023թ.